Օրակարգում՝

1. 2023 թվականի ընթացքում Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կատարած աշխատանքների ամփոփում

(զեկուցող՝ Լոռու մարզպետի խորհրդական Տիգրան Հովսեփյան, երիտասարդական խորհրդի անդամներ)

2. Խորհրդի կազմի փոփոխություն

(զեկուցող՝ Լոռու մարզպետի խորհրդական Տիգրան Հովսեփյան)

3. Այլ հարցեր:

Քննարկվել են՝

2023 թվականի ընթացքում Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կողմից իրականացված աշխատանքները, մասնավորապես՝ խորհրդի գործունեությունը Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների ընդունման և աջակցություններ տրամադրելու ուղղությամբ:

Կախված տարվա ընթացքում անդամների ցուցաբերած ակտիվությունից՝ Խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին:

Տարբեր բնագավառներում երիտասարդներին հուզող առկա խնդիրները, դրանց ուղղությամբ տարվող աշխատանքները:

Որոշվել է՝

Գալիք տարում մարզում երիտասարդական հարցերի լուծման հարցերում ավելի ակտիվ համագործակցել միմյանց հետ:

Առաջիկայում անցկացնել խորհրդի արտագնա նիստեր՝ համայնքներում ստեղծված երիատասարդական խմբերին ծանոթանալու նպատակով:

Խորհրդի նախագահի տեղակալ՝ Տ. Հովսեփյան

Արձանագրող՝ Ս. Սերոբյան